Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի

Որոշում

Moodle և Mulberry համակարգերի ներդրման ընթացքը համալսարանում

/զեկ.՝ Վ.Մելքոնյան/

Արձանագրություն N2, 23.10.2018թ.

ՀԱԱՀ-ում էլեկտրոնային ուսուցման և ներքին փաստաթղթաշրջանառության ներդրման աշխատանքների ընթացքը համարել բավարար.

1.Հանձնարարել SS և ԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Վ.Մելքոնյանին.

1.1. Մինչև ս.թ. հոկտեմբերի 31-ը ամբիոնների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա ամփոփել Moodle հարթակում տեղադրված տեղեկատվությունը և այն ներկայացնել ռեկտորատի առաջիկա նիստում:

1.2 Մինչև նոյեմբերի 9-ը դեկանատների հետ համատեղ իրականացնել բոլոր այն ուսանողների գրանցման գործընթացը, ովքեր ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել Moodle հարթակում գրանցվածների ցուցակից և ավարտել իրազեկման գործընթացները առկա համակարգի ամբողջ ուսանողության շրջանում:

1.3 Մինչև ս.թ. նոյեմբերի 23-ը ավարտել Mulberry համակարգի ուսուցման գործընթացը և գործարկել համալսարանում

2. Հանձնարարել դեկաններին և ամբիոնների վարիչներին.

2.1.Մինչև ս.թ. հոկտեմբերի 25-ը SS և ԻԾ կենտրոն ներկայացնել դասախոսների և նրանց կողմից դասավանդվող առարկաների վերաբերյալ ձևաթուղթը՝ էլեկտրոնային տարբերակով:

2.2 Մինչև ս.թ. նոյեմբերի 5-ը SS և ԻԾ կենտրոն ըստ ամբիոնների ներկայացնել բոլոր այն դասախոսների ցուցակը, ովքեր չեն մասնակցել վերապատրաստման դասընթացներին՝ 2-րդ փուլի վերապատրաստման դասընթացներին նրանց մասնակցությունն ապահովելու համար:

2.3 Մինչև ս.թ. նոյեմբերի 2-ը կազմակերպել բոլոր այն ուսանողների էլ.փոստերի հավաքագրման գործընթացը, ովքեր չեն ներկայացրել տեղեկատվությունը, և ըստ սահմանված ձևաչափով տրամադրել ՏՏ և ԻԾ կենտրոն:

3. **Հանձնարարել գրասենյակի վարիչ Ն.Դավթյանին** մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը ստեղծել համալսարանի փաստաթղթաշրջանառության կանոնակարգ և ներկայացնել հաստատման:

Գիտական խորհրդի նախագահ՝ Վ.Ուռուտյան

Գիտ. քարտուղար՝ Դ.Բալասանյան